

ՊԱՏԱՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պուշկար/ույ	համար
Տարեկան	12 ֆր.
Վեցամսեայ	6 »
Մասնատարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Անկախ/ույ	համար
Տարեկան	3 ֆր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցումն տող ստու  
ջին երեսին համար 40 ս.  
իսկ վերջին երեսին հա-  
մար 20 սանթիմ է. երե  
րեկ անցի անգամներու  
համար 20 0/0 զեղջ կըլ  
լայ  
Վառնայի համար մի ֆե 10 սանթիմ

# ՉԱՐՔՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՊՈՒՆԻ ԶՈՐԵՔԻՆԻ ԵՒ ՇՈՒԹՈՐԵՐԸ

Գրական և գրական կեն  
տրոնի անդամներու հաս-  
ցիին

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Rodaction du journal  
„Charjoum“  
Varna (Bulgarie)

Մասնատարեկան համար  
Vienne 20 ՄԱՆԹԻՄ ( )  
Այլապիսի համար  
մեկի ( 15 ՄԱՆԹԻՄ ) ( )

Գրութիւնք ևս չեն տուիր

ՉԱՐՔՈՒՄ Ի ՊԱՏԱՆՈՐԻՍՏՐՈՒՆԻ ԳՐՈՒՆԴՐԱՆՔԻ ԲԱՏՆԵՆԻՆԸ ՊԵՏՐ ԵՒ ԿԱՆՈՒՄ ՎԱՍՐԵ

### ՍԱՍՈՒՆՅԻՆ

(Մեծախօսութիւն)

Սասունցի եմ. ծընայ կոպիտ ժայ-  
ռերէն,  
Անկախ կեանքի անկեղծօրէն սի-  
րահար.  
Եւ ժառանգած լոկ սուր, զինք իմ  
հայրերէն,  
Երակներուս մէջ կը թուր կեանայ  
յար:  
Քալիցի սէգ՝ կեանքին մէջէն մինչ  
հիմայ,  
Կոթընած եմ ըրացանիս, դաշոյ-  
նիս,  
Ոտքիս տակը աըրորելով անխը-  
նայ՝  
Բռնու թիւնը, որ շղթայն կուզեր  
զիս,  
Քանի՛ անգամ կիտնքիս մէջը ան-  
սայ ես,  
Որ սարերուս վերեւ ամպեր դիպ-  
ուեցան.  
Բայց արձակուած որտեղեք իմ  
զէնքէս՝  
Տարազնեցիս սեւ ամպերը ցիր ու  
ցան,  
Եւ ես բացի արեգակին լուսա  
շող՝  
Ճառագայթեց ճամբան շիտակ զէպ  
ինծի  
Վանեցի սեւ խաւարը պիզմ ու մա-  
շող,  
Եւ անապակ շունչը լեռանց շըն-  
չեցի:  
Հայրենիքի կուրծքին վրայ միշտ  
թառած,  
Պահապանը պիտի անոր ըլլայի.  
Շուրջս բացող այդ դաշտերը լայն  
տարած՝  
Պիտ՝ չըլլային այսօրուան պէս ա-  
մայի:  
Եթէ անոնք, եղբայրներըս հեռա-  
ւոր,  
Կառկաւին իրենց ձեռներն ինձ  
չիտակ.  
Ա՛լ փարէին գաղափարիս իմ աղ-  
ւոր,  
Ձը մնային կուռի փառքին անգի-  
տակ,  
Բայց անոնք... օ՛, սառնայուած-  
քով կը դիտեն.  
Շարժումներս՝ թէ պիտի՛ կուռի՞մ  
արդեօք վէս,  
Եւ պատրաստ են ծափահարել չորս  
դիւն,  
Եթէ յաղթեմ, ու լա՛լ՝ եթէ մեռ-  
նիմ ես:

Եւ ի՞նչ արժէ կոծը, եթէ իմ մար-  
մին  
Այ ժշրուի, եթէ ինչամ ալ արդէն  
Յեանն գրեպի մը դէպ զազան թըշ-  
նամին՝  
Եւ անէ՛ծք մը անսիրտ հայուն նե-  
տելէն:  
Բայց ես ապրիմ պիտի ազա՛տ,  
յար ազա՛տ՝  
Իմ ձորերուս, իմ սարերուս մէջ  
չքնաղ,  
Ինչպէս կապրի սէգ բազէն իր հա-  
րազա՛տ՝  
Լեռան կուրծքէն կախուած ժայ-  
ռին մէջ խաղաղ:  
Ձէնքը ուսիս՝ ժայռէ ի ժայռ, սա-  
րէ սար  
Պիտի թռչիմ մինչեւ շունչս իմ  
վերջին,  
Թող չը տեսնեմ ես ո՛չ հանգիստ, ո՛չ  
դադար,  
Լոկ դիակըս, լոկ օսկերքս թող  
հանգին:  
Թէ չը քամուի տաք արիւնքս իմ  
բոլոր,  
Ո՛չ որ կրնայ մարել կուռի սէրըս  
վառ.  
Ընկճել կամքս ժայռի պէս ըրիտ  
ու հօր,  
Եւ ստ/պել որ ալ թողում սուրբս  
վար:  
Սասունցի եմ. լերան մարդը ես  
խըրրիստ,  
Ձինու ին, հող չէ՛ թող բանակներ  
ինծի դէմ.  
Ես իմ ժայռիս վըրայ կանգնած  
անյողողդ,  
Պիտի կուռիմ՝ մինչեւ մեռնիմ կամ  
յաղթեմ:  
Վհսս

### ՇԱՏ ԱՐԴԱՐԱՑԻ ՈՐՈՇՈՒՄ

«Շարժում»ի 606 թիւում հա-  
ղորդված Հ. Յ. Գալուստիանի  
որոշումը մեր յիշատակական միւս  
մարմինների հետ միանալու վե-  
րաբերմամբ՝ շատ մեծ «անակն-  
կալ է եղել» միութենական  
մասնագիտութեան մէջ պատմա-  
կան անշնորք պ. Խուշպուլեանի  
համար:  
Յիշուի մեծ անակնկալ... մար-  
դը ամիսներ շարժարկեց ինչ,

որ խեղճ սղորմի մարդկանցից  
մրու թիւն ստեղծող յեռնախումբ  
կազմեց, ազգը իբր թէ փրկե-  
լու խոշոր, խոշոր, բայց օգի մէջ,  
ծրագրիներ նախագծեց, և  
ահա ամենազօրեղ յիշատակական  
մարմինը մի այնպիսի որոշում է  
տուել, որ այդ բոլորը սապոնի փր-  
կից կազմված փամփուշտի նը-  
ման օգն են ցնդում, ու Խուշ-  
պուլեանին այլու ոչինչ չի մնում  
ասել այն մարդկանց, որոնց փայ-  
լուն երազներով օրօրել էր  
երկար ամիսներ ընթացքում...  
Այդ շատ անապասելի մեծ անա-  
կնկալը այնքան է ազգել Խուշ-  
պուլեանի վրա, որ պարոնը  
ինքզինքը մոռանալով, հարցեր  
է տալիս — ինչու՞ Գալուստի-  
անը այդ որոշումը տուեց, ի՞նչ  
իբաւունքով նա արու այդ քայլը:  
Միամիտ ընթերցողն էլ, թե-  
թեբեւս Պրովադիայի, պուլկարա-  
կան մի գիւղաքաղաք, ուր ե-  
րեք հայ կան, միութենական  
պատգամաւորն էլ այդ տողերը  
կարգալիս մտածէ — այո՛ Գալուստի-  
անը ի՞նչ իբաւունք ունէր  
տուանց պ. Խուշպուլեանին հարց-  
նելու այդ տեսակ որոշումներ  
տալ: Բայց մենք, այս անգամ՝  
ոչ պ. Խուշպուլեանի, այլ նրա  
ընթերցողներին կարող ենք յոյ-  
տարարել որ Գալուստիանը  
իր որոշումները տաւ միջոցին,  
նոյն իսկ չի էլ մտածում թէ աչ-  
խարհիս վրա Խուշպուլեաններ  
կան ի՛նչ միութենական յանձ-  
նախումբերի մասին, երբէք էլ  
չէ մտածել:  
Այստեղ աւելորդ չինք համա-  
րում պարզել, որ Խուշպուլեան,  
կրկին ոչ մաքուր ճանապարհ-  
հով, ուզում է ամբոխին զրգ-  
ուել Գալուստիանի որոշման  
մէջ կարեւոր մասը ամենայն գիւ-  
րութեամբ կուլ տալով:  
Մենք պաշտօնական բանակ-  
ցութիւնների մէջ մտնելը մի-  
թելու հետ շեշտել էինք և ու-  
րոշման մի կարեւոր մասը,  
որը ապացուցանում է թէ Գալ-  
ուստիանը ընդունում է որ  
բոլոր յիշատակական խմբակնե-

րի մէջ էլ կարող են գտնվել ան-  
կեղծ և ազնիւ հայրենասէր յի-  
շատիականներ:  
Ահա որոշման այդ մասը.  
«Գալուստիանը ընկերներին ար-  
տօնում է, մանաւանդ երկրի  
մէջ, ոչ գալուստիական ազնիւ ան  
հատերի և խմբերի հետ համե-  
րաշխարհ գործել ընդհանուր  
թշնամու հանդէպ»:  
Խուշպուլեան ազնու թիւնը  
պէտք էր ունենալ որոշման այս  
մասը եւս գնելու իր յօդուածի մէջ  
լու հասկանալով որ քննադատ-  
ված յօդուածի միայն իր հաշիւն  
եկածը ընթերցողներին ներկա-  
յացնելը առնազն անազնութիւն  
է:  
Բայց ի՞նչ կարելի է սպասել  
մի պարոնից, որը իր էջը առաջ  
քշելու համար թոյլ է տալիս ար-  
տասահմանեան շարժումներ  
գործունէութիւնը հաւասարաց-  
նել երկրում գործող յիշատակա-  
կանների գործունէութեան հետ:  
Անցնենք խնդրին. մեզ աւելի  
կարմացնում է Խուշպուլեանի  
ուսու... ձեւաւալը. Օրինակի հա-  
մար նա հարցնում է — Գալուստի-  
անը ի՞նչ իբաւունք ունէր  
եկրակացնելու թէ՛ միւս յիշա-  
տակական խմբերը բարոյապէս  
ընկած են:  
Այս խօսքերը կարող են կար-  
ծեցնել տալ թէ Խուշպուլեանը  
աշխարհի վրա չէր, երբ սպան-  
վում էին Ձիթեան, Միսոն, Սա-  
գունի, Արսորգ, Համր, ու վիրա-  
ւորում նազաբէգեանը. երբ հը-  
կու հատածները իրար օրակում  
էին աշենապատ ածականներով,  
երբ մինչեւ օրս էլ վերակազմեալ  
ների օրգանները հայ յիշատակ-  
խմբիւնը պոռնկութիւն են ու-  
զում դարձնել:  
Այս բոլորը չէ լսել, չէ տես-  
նում Խուշպուլեանը և այսօր լե-  
տարգիւն քնից արթնացողի պէս  
բացականչում է — ի՞նչ կայ, ի՞նչ  
է եղել, ի՞նչ իբաւունքով կարե-  
լի է այդպէս ասել: Ղին հնչակ-  
եան օրգաններն և գործիչներն  
անգամ չեն ուրանում այդ, և մտ-  
րակում են թէ գրչով և թէ կեն-

դանի խօսքով, Խոջապետանը ուրանում է... ուրանում է...

Պարոնի երեւակայութիւնը այն քան է բորբոքում, որ նա կարծում է թէ իր ինչուները, միութենական յանձնարարի հրաւերները, որի թագնով մեծ սինը, սակայն ոչ երկաթէ, ինքն է կազմում, կարող են սրբադրել առ զանազան թեան ուրուիմբ... Ի՞նչպի մեծ երեւակայութիւն... Եւրծես թէ դաշնակցականներին մէջ Խոջապետանի չափ հասկացող մարդիկ չը գտնուին հասկանալու թէ՛ յայրենիքի համար ի՞նչը կարող է օգուտ բերել, և ի՞նչը վնաս: Համոզված լինելով որ մեծ յոյսերով ապրող մարդիկ մեծ վնասներ են կրում եւր այդ մեծ յոյսերը խորակվում են, և չուղեւոր որ պիտու զուգորդանք և միութենականները չարաբաստիկ յուսախաբու թեան ենթարկվեն, աւելորդ չեմ համարում մի մեծ անակնկալ էլ պատճառել դրանց:

Դաշնակցութեան պատգամաւորական ժողովը, «Դրոշակի խմբագրութեան միջոցով «Վերակազմակերպութեան կողմից ընդունեց մի պաշտօնական առաջարկ, գոնէ համերաշխարար գործելու համար երկու կողմից ներկայացուցիչներ նշանակվեն իւրհարակցելու, ու մերժելով յանձնարարեց «Դրոշակի խմբագրութեան Վերակազմակերպութեան պաշտօնապէս հարգող ժողովի մէջ անցած բացասական բանաձեւը:

Կարծեմ այս վերջին անակնկալը Դաշնակցութեան տւած որոշումը այլեւս սրբադրելու յոյս չէ թողնում:

Եւ սա իրապէս շատ արգարացի որոշում է, մանաւանդ վերակազմակերպութեան հանդէպ, որչափ էլ որ Խոջապետանի ինչուները բազմապատկեն...

ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆՆԻ

ՄԵՍԿՈՒ ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ԱՌԱՋ

(Շար. նախորդ թիւի)

Երբ «Մշակի» հրատարակութեան շրջանը սկսինք, երկարօրէն առիթ պիտի ունենանք այն ատենուան հայ լրագրութեան վիճակին վրայ խօսելու: Այս անգամ լակ Արծրունիի այդ մասին ունեցած գաղափարները պիտի շօշափենք:

Արդ ի՞նչ է խմբագրիչը: Խմբագիրը ըլլալ կը նշանակէ հասարակական պաշտօն մը յանձն առնել: Այդ կարգի պաշտօն մը երկու կերպով մարդ կատանայ. կամ պետութիւնը կը նշանակէ, կամ հասարակութիւնը, ինք կը նշարէ:

Խմբագիրը ասոնցմէ ո՛չ մէկն է, անիկայ ինքնիրեն երեւան կուգայ ու կը նշարէ իր պաշտօնը ինքնակող պաշտօնապէս...

մապատկեն... Խոջապետան ինչ որ կուով է վախեցնում զաշնակցականներին, Զարմանալի տրամաբանութիւն ճշմարիտ: Պարոնը ուզում է ասել—եթէ Դաշնակցութիւնը չը ենթարկվի միութենականներին կողմից և իր կածիքը չը փոխէ անբարոյականացած յեղափոխական խմբակների մասին—այն ժամանակ նրա դեմ կուի պէտք է գտն: Ամա գտար վախցնելիք մարդիկ:

Չենք ուզում արիւթէ՛ր, չենք բռնի պատկէ՛ք ուզում կատարել, ի՞նչ է, իսկ կուից հէջ չենք վախեցնում: Աշխարհիս վրա ամեն գաղափար կուով է յաղթանակ տարել, մենք էլ կուով կը յաղթանակենք, եթէ այդպէս է հաճելի ձեզ: Վայ ընկնողին. բայց կնկնի նա, ով չէ հասկանում հայ ժողովրդին և նրա պահանջները. և մենք համոզված ենք որ դրանք կը լինեն Դաշնակցութեան հանդէպ խոնջեցող հանդիսացողները:

ՎԱՐԴՈ

ԲԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ

ՅԱՂԱՆԱԿ ՄԸ ԵՍՍ



Ամսոյս 12ին Պուլկարիան ասոնեց իր բոստային և հեռագրական հաղորդակցութեան անկախօրէն գոյութեան 25 ամեայ յիշելանք: Յորձեանի հանդէսը կատարուեցաւ Սօֆիա ի ներկայութեան Թէրօինանտ իշխանի, այդ առթիւ բոստային զըլխաւոր վարչութեան նոր շինութեան բացման հանդէսին հետ միասին և նոյն շինութեան մէջ:

Այդ հանդէսին առթիւ ի պատասխան հարգողակցութեան նախարար ճառէն, իշխան Թէրօինանտ սիրուն բանախօսութիւն մը ըրեր է, որը կը զետեղենք հոս: Պարոններ,

ասոնեայ մըն է ան: Բայց ի՞նչ է իր պաշտօնը: Մեր մէջ, շատերը կը կարծեն թէ խմբագիրը հասարակութեան գոստիարակիչն է: Այդ կարծիքը սխալ ու ծիծաղելի է: Հասարակութեան գոստիարակը՝ հասարակութիւնը ինք, պէտք է ըլլայ լակ խմբագիրը պարզ հետազոտողի դեր ունի, Հասարակութեան համար խմբագիրը այն է, ինչ որ է բնագէտը՝ բնութեան հարստութիւնները հետազոտելու համար: Խմբագիրը հասարակութեան մէջ պէտք է փնտռէ ու երեւան հանէ քննարկման արժանի, հում տարրերը, ինչպէ՛ս ըլլանալէտը զայդ կընէ բնութեան մէջ:

Ամօթ է այն խմբագրին, կը գոչէ Արծրունի, որ երկար ժամանակ հրատարակելով մի պարբերական գրուած, չը կարողացաւ զարթեցնել ընդունակութիւններ, իր չորս կողմը կազմել տալանդներ, կը թել գրողներ: Ոչոր մեկն է այն օրագիրը, որը տասը տարիից աւելի հրատարակուելով, չի կարողացաւ հետազոտել հասարակական հողը և նրա մտաւոր հանքերի խորքից յարուցանել ինքնուրոյն արդիւնքներ, զարթեցնել ինկ նւորոյննութիւնը:

Այսօր, երբ մենք կը տօնենք մեր երիտասարդ պետութեան բոստային և հեռագրական հաղորդակցութեան անկախ գոյութեան 25 ամեակը, երջանիկ զուգորդակցութեամբ կը լրանայ և համաշխարհային բոստային միութեան 25 ամեակը և հանդիսաւորապէս կը բացուի մեր դըլխաւոր վարչութեան նոր պաշտօնապետներ:

Բոստ, հեռագիրը վերջերս և թէ լիֆօնը կը կազմեն մարդկութեան յառաջադիմութեան գըլխաւոր ազդակներէն մին և կը ցուցնեն ամենմէկ պետութեան հասունութեան և քաղաքակրթութեան աստիճանը:

Մեր երիտասարդ երկիրը քաղաքական անկախ կեանքի վերակազմակերպում առաջին օրէն իսկ երիտասարդական թափով մը վերցուց բոստային և հեռագրական հաստատութիւնը այնպէս, ինչպէս որ ինք ժամանակին գտաւ: Աւ գէպի քաղաքակրթութեան եղած ընդհանուր ձգտումներու մաքառումին մէջ ամբողջ շարք մը գոստարութիւններ և արգելքներ յաղթելէ յետոյ, մանաւանդ երիտասարդ պետութեան մէջ, 25 տարուան ընթացքին մէջ Պուլկարիան օրինակելի ջանքերով և հաստատակամ թեամբ յաջողեցաւ պատուաւոր դերք մը բռնել յառաջադէմ ազգերու միութեան մէջ, անոնց հետ հաւասարապէս ընդունալու և այսօր այդ միութեան առողջ մէկ օղակը կազմէ:

Այս համեստ հանդէսը, որուն զուր այսօր ներկայ էք, որպէսզի աչքի առնել ընդհանրապէս անցած ժամանակը և հաշիւ տանք մեր համեստ ուժով և միջոցներով ըրածները քաղաքակրթութեան և յառաջադիմութեան մէջ նոր խաղաղ յաղթանակ մըն է:

—Հաճելի պարտականութիւն կը զգամ իմ անկեղծ շնորհակալութեամբ:

Թիւնս յայտնելու այս դժուարութիւններով և անյարմարութիւններով լի, բայց քաղաքակրթական մեծ գործին համար աշխատողներուն, և կը շնորհաւորեմանոնց 25 ամեայ յորելանով և անուսացած ըլլալով որ անոնք գուր գուրաւով Պուլկարիայ քաղաքակրթութեան և յառաջադիմութեան գործին վրայ, այսուհետեւ այլ միացած ուժերով աւելի զօրեղացան և յարատեւ պիտի զարգացնեն և կատարելագործեն մեր պետական կազմութեան այս կառուցող մարդ և գըլխաւոր վարչութեան նոր պաշտօնաւորները բացուած յոյսաբարեւով, զայն կը յանձնեմ հանրային շինութեանց և հաղորդակցութեանց նախարարին:

ՌԻՆՍԻՆՑ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մակարովի սպանվելուց և Ռուսական ժողային վերջին պարտութիւնից յետոյ որչափ էլ որ ռուսական վարչութիւնը աշխատում է իրեն յուսահատված չը ցոյց տայ, այնուամենայնիւ զղաղի նշաններ են երեւում նրա ընկճման:

Կառավարութիւնը մէկ ուղեց Ռալիկեան նաւատորմիցը ուղարկել, մէկ էլ ետ կանգնեցաւ որոշումից, կասկածելով որ նոր զննարկ նաւատորմիցն էլ նոյն վիճակին կարող է ենթարկվել:

Այդ բաւական չէ անհամաձայնութիւններ կան ժողային բարեբազոյն պաշտօնեաների մէջ, ազմիրալ Սկիրզով չէ ուզում ընդ պատակելի փոխարքայ Ալէքսիւվին, իլէքտիէլ համաձայն չէ որ Սկիրզովը նշանակվի Մակարովի տեղը: Յօրի քննիչ յանձնաժողովը նշանակելը, Պետրօպօլովսկի զրահաւորի և Մակարովի կորստեան պատճառները քննելու համար, բացորոշ կերպով ցոյց են տալիս, որ կառավարութիւնը և

կրնայ իր գոյութեան իրաւունքը պահպանել ու անջատելու ապրիլ:

Խմբագիրը աշխատութեան այդ նորոններէն մէկն է. անիկա քարոզող չէ, ու չի կրնար ըլլալ, Կարողներու դարը անցած է հիմայ Ունայն խօսքի տեղ՝ գործն է որ կը պահանջուի իրմէ: Ընթացիկ խմբագիրը այն է, որ կրնայ գոհացում տալ այդ պահանջին:

Հասարակութիւնները բնական օրէնքով, միայն կը բարեշրջեն իրենց կենցաղին, բարեբաւ և ըմբռնումներուն ամբողջութիւնը. ժամանակին ընթացքին հետ, անհրաժեշտօրէն տեղի կուտայ քաղաքակրթութեան ըստեղծած նոր հոսանքին:

Հետեւաւոր, յոսպիտութեան ստացվին և գըլխաւոր յատկութիւնը պէտք է ըլլայ յառաջդիմութիւնը, շարունակ նոր մտքերու, նոր գարգացման ծանօթանալու անոնց հետեւիլը:

Անանց այս գըլխաւոր յատկութեան

բարձր պաշտօնները սարսափելի հարածները տակ զուլաները կորցրել են և իրենք էլ չեն իմանում թէ ինչ գիրք բռնեն Ռուսական պրեստիժը փրկելու համար :

Այդ անյաջողութիւնները բաւական չէին , այժմվանից լուրերը են տարածվում երբեմն անորոշ , երբեմն պարզ որ ցամաքային զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Կորոստայովի կեանքն էլ վտանգի մէջ է . ուստի ստում են նա հիւանդ է ծանրապէս , ոմանք թէ՛ ճարտանցի ջան ֆէտայիներ որոշել են դաւադրութեամբ սպանել Կորոստայովին , ուստի զորքին բոլորովին վհատեցնելու համար :

Բաւական չեն մարդկանց և զբարհատները կորուստը , առանց մի արդիւնքի , պատերազմն էլ շատ երկարելու նշաններ է ցոյց տալիս :

Ասում են որ Ռուսիան օրը 39ը միլիոն ռուբլի ծախում է պատերազմի համար , և եթէ պատերազմը երկար տեւէ , անտանելի կը լինի երկրի տնտեսական վիճակը :

Պակաս չեն և ներքին լըլըլուտումները , վերջերս եւրոպական թերթերը հաղորդեցին որ մի Լեհացի անիշխանական ուղել է փորձ անել Յարի կեանքի դէմ : Դաւադրութիւն կայ նաեւ ներքին գործերի նախարար Պլէվէի դէմ . զաւանդում մեծ քանակութեամբ ձեռքարկութիւններ են տեղի ունեցել այդ պատճառով :

Ռուս ամբողջ կրկին գրգռված է հրէաների դէմ , Լուրեր են տարածվել որ հրէաները ճաքոնացիներին օգնում են , և ամբողջ կատաղութեամբ շարժելու պատրաստ են : Ռուս եպիսկոպոսները , կառավարութեան թեյազրույթներ , քահանաներին պատերիւն են որ ժողովրդին համոզեն թէ՛ հրէա հրպատակները եւս հաւատարիմ են Յարին . ու նրանք էլ Ռուսիոյ

յայտողութիւնն են կամենում : Ահա ուստի կեանքի այս խառնաշփոթ վիճակում Անգլիայի թագաւոր Էդուարդը ճիգեր է թափում Յարին համոզել որ իրեն թող տրուի հաշտութեան միջնորդ լինել երկու կողմ պետութիւններին մէջ : Իրուական մամուլը շատ կասկածանքով է վերաբերում գէպի Անգլիայի հաշտութեան թերին և հակառակում է :

Բայց եւրոպական մամուլի մէջ կարծիք է յայտնվում որ հաշտութիւնը կարող է հասնանել լինել , եթէ Ռուսիան մի լուրջ յաղթութիւն տանի , կարողանայ իր վրէժը լուծել և մասամբ էլ իր մեծ պետութեան ընկած վարկը բարձրացնել :

Ռուսները յոյսը ցամաքային պատերազմի վրա է . այնու տանն յաղթութիւն ցամաքի վրա են սպասում : Իսկ լուրջ պատերազմ ցամաքի վրա հազիւ մայիսին տեղի ունենայ :

ՆԵՐԿԱՅՈՒՄ Ի ՆՊԱՍՏ ԱՂԳԱՅԻՆ ԵՐԿՍՆԵՒ ՎԱՐԺ ԲԱՆՆԵՐԻ

Երկսեռ դպրոցների հոգաբարձութեան առաջարկութեամբ ճեղքեցաւ խումբը , Պ. Պակասանի ղեկավարութեամբ , այս հինգը ղեկավար , պետի ներկայացնէ Շէքսպիրի Օթէլլո ողբերգութիւնը :

Ներկայացումը ի նպաստ դպրոցների լինելով , անշուշտ վառնայի հայ հասարակութիւնը պէտք է իր պարտականութիւնը համարէ տոմսակ վերցնել :

Հայ հասարակութեան յայտնի է որ մեր հոգաբարձութիւնները անկարող են մեր դպրոցների նիւթակներ ապահովել , եթէ ինքը հասարակութիւնը զանայ իր բարոյական և նիւթական աջակցութիւնը , մանաւանդ երբ այդ աջակցութիւնը արոււմ է ի փոխարէն բարոյական ու մտաւոր գոհունակութիւններ սրտածառող ձեռնարկներով , ինչպիսին է այս ձեռի ներկայացումները :

Հասարակութիւնը ինքը պէտք է

պարտաճանաչ գտնվի դէպի իր հանրային հիմնարկութիւնների վարչները , որպէս զի այդ վարչներն էլ կարողանան պարտաճանաչ լինել իրենց պաշտօնները կատարելու մէջ :

ԱՆԿՈՒՄԻՅ ԱՆԿՈՒՄ

Վատութիւնը եւս չափ ու սահման ունի աշխարհիս ամենավատ մարդկանց համար , միայն Ամերիկայի վերակազմեալ վարչներն են , որ վատութեան սահմանից կարող են անցնել :

Վերջերս «Չայն Հայրենեացի» վարչների ստորնութիւնը այն աստիճանի է հասած , որ նրանք այլեւս ամեն լաւ գործ կարող են ուրանալ , աշտոնել , ինչպէս և ամեն աշխուհու հայրական դատին անկեղծօրէն ներկած մարդկանց , լինին նրանք հայ կամ օտար , ցեխոտել , մրտալ , որովհետեւ այդ լաւ գործերը եւ լաւ մարդիկ այս կամ այն ձեւով կապ ունեն Պաշակցութեան հետ :

Վերակազմեալ ցածնոգի վարչները աղտոտ յարձակումներն նիւթ վերջերս զարմել են Սասունի դէպքերը «Պրօ Արմէնիան» և իր խմբագիր պ. Գիարը ու զօկտօր Լորիս Մէլիքով զաշակցական արտասահմանեան յարգելի գործիչը , որը իր վերջին երեք շրջա տարւան արտասահմանեան եռանդուն գործունէութեան շրջանում անձնապէս կազմակերպութեան վրա մի սանտիմ չէր նստել և ամեն տեղ յարգանք է վայելում :

Այստեղ ի հարկէ մեր նպատակը չէ պաշտպան հանդիսանալ Գիարին , Լորիս Մէլիքովին , որովհետեւ նրանք բարոյապէս եւ իրենց ի նպաստ հայրական դատին կատարած ծառայութիւններով այնքան բարձր կանգնած անհատներ են , որ վերակազմեալ վարչների նման հասարակական բարոյականութեան ամենաստոր աստիճանի վրա գտնվող մարդկանց լուսանքները չեն հասնի նրանց . մեր նպատակը չէ նաեւ պաշտպան հանդիսանալ Պաշակցութեան Սասունի գործունէութեան , որովհետեւ այդպիսի գործունէութիւնը քննադատելու համար վերակազմեալ վարչները ոչ խելք , ոչ բարոյականութիւնը , եւ ոչ տրամադրութիւն ունեն . ուստի վերակազմեալները

հետ այդ ուղղութեամբ խօսել բացարձակ անպատուութիւն կը բերէր մեզ , ինչպէս անպատուար կը լինել եթէ համաձայնէինք Սուլթանի և իր լրտեսների հետ բարոյական հիմքերով զեկավարվելով փաստարանել թէ՛ նրանց բռնած գիրքը դէպի հայ ժողովուրդը հրէջութիւն է :

Եւ այսպիսի մարդիկ դեռ լսիրջութիւն էին ունեցել Պաշակցութեան զինել համերաշխ քայլեր առնելու համար բանակցութեանց մէջ մտնել ,

Բայց սրանց այդ լսիրջութիւնը մեզ այնքան չէ զարմացնում , որչափ այն միամտութիւնը , կամ կեղծութիւնը , որով զինված մի շարք միութեաններ , ի թիւս որոց եւ Խուշակեան թոյլ են տալիս իրենց Պաշակցութեան էլ հրաւեր կարգալու հայրական կեանքի ամենաստորին տիպերի՝ իրրեւ յեղափոխականների հետ ժողով գումարել , հայ ժողովրդի ցաւերի մասին եւ հայ բոլոր յեղափոխականների հետ միութիւն ստեղծելու համար խորհրդակցել :

Վերակազմեալների բարոյականութեան որոշիչը գերօրից վար լինելը յայտնի ճշմարտութիւն է , բայց ի՞նչպէս որոշել այն մարդկանց բարոյականութիւնը սրտք այդ միկրօններին ուղղում են մտնել և Պաշակցութեան մէջ , ի՞նչով բացատրել այդ վիսասակար ձգտումները...

Ահա մի հարց որ շատերի համար անլուծելի է մնում , որովհետեւ այդ վիսասակար ձգտումների արտայայտութիւնները միշտ ոսկածվում են ազգասիրական արտովասնելով և վայցեցնելով :

ՎԱՐԺՈ

ՄԵՇ ԳՈՐԾԱԿՈՒՄ ԵՒ ՈՒՆԿԱՐԻՈՅ ՄԵՃ

Իրեթէ շարաթ մըն է որ Ուն . գարական երկաթուղիներու գործաւորները , մաքենալարներու հետ միասին գործադուլ ըրած են : Այդ պատճառով Ունգարիոյ բոստային յարաբերութիւնը Պալ . քանճան պետութիւններու հետ քանի օրէ ի վեր համարեա թէ լաղուած էր :

Նառավարութիւնը այժմ երկաթուղիները յանձնած է զինուորականութեան և զինուորներն են որ պահպան պաշտօններ կը կատար

թեան կը գրէ Արժուոնի , լրագրութեամբ պարապող լաւ է որ ձգէ այդ գործը և կոչկակարութեամբ պարապել : Նոյնիսկ կոչկակարը , սակայն , չի կրնար իր կոչիկները վաճառելու յաճախող գտնել , երբ հին , նահապետական ձեւը պահելով , չի հետեւի միշտ հնարուող աւելի կատարելագործում ձեւերուն :

Լրագրութեան համար երբ այս պահանջները կը դնենք , հարկաւ չի պիտի հանդո բծենք որ մեր գէմելուող առաջին պատահական անձնաւորութիւնը խմբագիր գերբ ստանձնէ : Հիմնաւոր դաստիարակութիւն , երկուտիվները ըմբռնելու , քննելու յատուկ ուղղութիւն , բարձր ու կորովի նկարագիր՝ որ ոչ մէկ զիպուստական արգիւքներու կամ շլացրիցի հանգամանքներու առջեւ , իր ընտրած ուղղութեան չի դաւաճանէ , և որ աւելի մարհէ անմիտ ու տղէտ ամբոխային հոսանքը , փոխանակ սատկած ձուկի

պէս անկէ քշուելու : Այս տեսակ անձնաւորութիւն հարկաւոր է այսօր խմբագրի գերը արժանաւորապէս վարելու համար . Այն ասան միայն , լրագրութիւնը կ'ըլլայ արտայայտիչ և ներգործող :

Այո՛ , մեր հասարակութեան մէջ , ուր չիկայ հանրային կարծիք , գոնէ մամուլը պէտք է իր սրտ ուղղութիւնը ունենայ , որպէս զի հանրային կարծիքին ալ տայ այդ ուղղութիւնը կամ վարժեցնէ զայն իր յատուկ ուղղութիւնն ունենալու :

Եւ որպէս զի լրագրութիւնը կարողանայ իր ուղղութեամբ ազգի հասարակութեան մը վրայ , հարկաւոր է որ այդ ուղղութիւնը արտայայտիչն ըլլայ նոյն այդ հասարակութեան :

Մեր մէջ , շատ մը յօգուստագիրներ կը կարծեն թէ տարին քանի մը հաստ օտար կեանքէ , մեր պահանջներուն բոլորովին անհամապատասխան ձեռքերին ինկած առաջին վկայաա

նութիւնը թայգմանելով ու հրատարակութեան տալով , ազգին ծառայութիւն կը մատուցանեն , Բայց այդ տեսակ թարգմանական յօդուածներով լի օրագրութիւն մը չի կրնար ազգային կեանքի արտայայտիչ ըլլալ . ասիկա ազգային օրագրութիւն չէ : Եւ այդ պատճառաւ ալ հայ լրագրութիւնը չէ կրցած իր բարձրութեան վրայ մնալ : Հանրութիւնը լրագրութեան կը նայի , իբր երկրորդական , երրորդական , նոյնիսկ արժամարհելի հաստատութեան մը վրայ , Հայ լրագրութիւնը այսօր ինքզինքը հասարակութեան ստորագաւ ըրած է , փոխանակ ինք գրաւելու առաջին տեղը :

Հայ հասարակութիւնը ընթերցանութեան պահանջը չունենալով , լրագրի մը կը ստանայ , յարեւաւորեան սկզբունքով , Հայ է , և իբր ազգասիր հայ լրագրի կը ստանայ , կ'ըմբարդին ալ կը համակերպի իրաց այս վիճակին ,

չի բողոքեր ու կը դառնայ կամաւոր մուրացիան , ինչ օգուտ կրնայ սպասել հասարակութիւնը այդ մուրացական լրագրութիւնէն , Ոչինչ :

Օգուտ , չըլլալէն զատ վիսասիր պատճառ կրլլայ ան , կ'ըմբարդէր հաճոյ երեւի ուղեկով բարեբար հարուստներու , որոնք ազգասիրար իր թերթը կ'ստանան , միշտ անոնց ներողներ կը շոյակ անոնց բոլոր կենցաղը , տմենայնիւ արարքները ներողներու կարծանանան և իբր օրինակ կը հրամցուին : Իսկ թշուառ տանջուող բազմութեան ձայնը , որ ստեղծուած է իր ձակոխի յրտինքով հացը ճարելու , ընդհանրութեան համար ինկողուած ու անլսելի կը մնայ :

Այն տեսակ լրագրութիւնը նախատինք կը բերէ այդ անուին :

Ծ.

(Շարունակելի)

